ՄԿԽԵՐԸ ԻՆՉՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՎԵՑԻՆ ԿԱՏՎԻ ՀԵՏ

ՀԱՅԿԱ ՎՈՒԵՐ

30 JAN 2018

ՀԵՔՅԱԹ

(ՓՈՔՐԻԿ ԹՈՒՆԻԿՆԵՐԻՍ ՀԱՄԱՐ)

1

Մի մտիկ դու—
Եսպես կատու...
Ցերեսը կլոր,
Աչքերը շլոր·
Բեխերն արշին
Փռված են դոշին,
Անդալա—մանդալա, լըլղոցի,
Ցերկար փորը մի խնոցի·
Անունը Կոստան։

Մի որ Կոստանին
Տարանք բոստան,
Մկաստան։

Խոհանոցի
Դուռը բացի,

Նա խոհանոց դնաց այցի։

Վոտով գլխով
Մտավ կողով,
Կողովից իրան
Նետեց պատուհան։

Այս—դեն ընկավ մտմտաց,
Ենկլուններում հոտմտաց·
Թին բուրեց մկնահոտ,
Լավ է, լավ ձեզ մոտ։

Եստեղ մկներ մարմալաղ...
Եստեղ մկներ շոկոլաղ...
Եստեղ կապրեմ մի շաբաթ,
Ուրկ կվորսամ շատ ու շատ,
Քչից՝ լերկու հարյուր հատ։

Պառկեց, փորը նա շփեց,
Պոչը գետնին վոր խփեց,
Ձենն հասավ մութ աշխարքին —

2

Գետնի տակին
Մկներն ահից չը շնչեցին.
—Վայ, նանի՛ Ջան, վայ-կանչեցին։

Մ՚ յ տրորանք...
Հերանք, մերանք,
Ախպրանք, քուրանք,
Մեռանք, կորանք...
Եսպես խաթա...

Ել ո՞վ կըտա գալեթ, գաթա...
Մածուն, կաթ, թան...
Ժաժիկ, չորթան...

Ջավար, կորկոտ...
Բոռոտ կատու,
Մ՚ դու չքոտ,
Մ՚ փսլնքոտ։

3

Յերբ ամեն ինչ կերան, պրծան,
Դարձան կմախք, թել ու դերձան,
Հավաքվեցին մկնահավաք
Ու կազմեցին մի կուռ բանակ։
Առան հազան զենք ու զրահ,
Արշավեցին կատվի վրա։
Մուկ Զարգանդը—մկնաբաշին,
Յերդվեց մաշկել կատվի կաշին։



ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՈՒՄԱՐԻ
11-28180ցվ

Ինքը հսկա՝
Գլխին դրեց պողպատ կասկա,
Իր հետևից մի գորշ առնետ,
Զորքի առաջ, թմբուկն իր հետ
Բում, բում, բում, բում...
Գետինն է դղրդում,

Ա՛խ դու, դու,
Բոռո կատու,
Վեր կաց փախի դռան ծակով,
Զարգանդն եկավ յերգ, նվագով։

Զորքը դռան՝
Մկնաբաշին մտավ մառան։
Թը՛մբ, թը՛մբ, թը՛մբ թմբկահարներ,
Դում, դում, դում, թնդանոթներ.
Թնդանոթներ են արձակում,
Գնդակները դուռ-պատ ծակում։

Զորքը խուժեց և խոհանոց...
Վոչ մլավոց, վոչ մռմռոց։

Կատուն մեռել,
Փայտ է դառել
Ցեվ բեխերը կրծքին փռել։
Զորքը կիտվեց կատվի շուրջը,
Զափչփելով պոչից դունչը։

Թեև նրանք ջոկ-ջոկ քաջ են,
Բայց թե կատվին մոտենալ չեն
Վեր է ահը,
Քան թե մահը։

Զարգանդն հասավ քաշեց բեխից,
Բայց չշարժվեց կատուն տեղից։

Թռավ փորին,
Տվեց գոռին,
Ականջ դրեք
Քաջի ճառին։

Ֆլան ու Ֆստան
Կար մի չար Կոստան,
Յեկել էր բոստան,
Տունն հանգստյան,
Քանդեր Մկոստան։



Մի վնասատու,
Ժանիքներն հատու
Շատ անխիղճ կատու։

Բեխերն աղի
Ինքը կատաղի,
Յեկանք իր հախից,
Սատկեց մեր վախից.
Կանգնել եմ փորին,
Երնեկ ես որին,
Քեֆ արեք, մկներ,
Նա գողի մեկն եր։

Ու ըսկսվեց պար, պապար,
Զորքը բռնեց մկնապար.
Զորապետը, պարբաշի,
Ոգնականը թմբկահար։

Մին էլ կատուն տաշ-տաշի,
Ծափին տալով վեր ցատկեց,
Քաջ Զարգանդին թաթի տակ
Արավ ցեղին նահատակ։

Ու չնայած քանակին,
Կռվով հաղթեց բանակին։

Մեծ թե պստիկ
Բոլորն եղան ճատիկ-վզտիկ։

Այսպես քաջ եր են կատուն,
Ճարպիկ, վարպետ ու արթուն.
Խաբեց, վորսաց բոլորին—
Մեծ ու պստիկ մկներին։

Կատվի խաղն եր,
Բայց ձեզ հախն եր,
Ա՛յ զավզակներ,
Ավազակներ,
Փուչ կենդանի
Վոչ-փուչ մկներ։

Դեհ, գնացեք
Սրանից լետ
Ջան-շալն-կաշի,

Մկնաբաշի,
Զարզանդի հետ
Են աշխարում
Փոր ման ածեք,
Ախտ ու ժանտախտ
Ցավ տարածեք։

Սրանից յետ
Դեհ գնացեք

Ժիր ու արի,
Մկնավարի,
Գիշերային
Մեծ ավարի,
Թե բընձի
Թե ձավարի։

Ինչ պատահի՝
Տվեք թալան.
Ճոթ ու կտոր
Ճալան — ճոթան
Զափեք — ձևեք,
Վարտիկ — շապիկ,
Գոտակ կարեք։
Պատռեք պարկեր,
Ցրեք մրգեր,
Մտեք սնդուկ,
Կրեք պնդուկ
Պտիկ կճուճ,
Համով սպաս, —
Գող մկներին
Ի՞նչն է չրհաս։

Դեհ գնացեք, —
Հատված հատված
Գիտուքյանը
Տվեք հարված։
Պահարանում,
Դարակներում,
Գրակալին,
Ծալը — ծալին
Կրծեք, յեղծեք
Հաստ — թանգ գրքեր։
Վողբամ չես ձեզ,
Ամենակեր,
Տգեղ մկներ։

Դեհ, գնացեք —
Մկնահանգի,

Դեհ, գնացեք
Պոր բռնեցեք
Ու խաղացեք,
Ծիլի — վիլի,
Սիլի — բիլի
Պահմոցիկ։

Մկնակատակ,
Բնածներին
Հանգիստ մի տաք.
Ննջարանում
Շեմ, դուռ, հատակ,
Կը՛ըթ — ղը՛ըթ, առեք
Ատամի տակ։

Շարվեք ոձիք,
Մտեք մանկան
Ու մոր ծոցիկ։
Տվեք նրանց

Խոբոցիկ,
Մկնավախուկ,
Ափալ — թափալ
Տեղից փախուկ։

Ա՜խ, ինչքան եք
Վնասատու, —
Ձեր ցեղին թուն,
Թակարդ, կատու,
Ցեվ այն այսպես
Խրատատու,
Մեծ դասատու.

Վարպետ Կոստան,
Վոր գա բոստան,
Դա ու անի
Ձեզ փոստահան։

Թե վոչ՝ աշխարհ
Կը հեղեղեք,
Շատ անիծված,
Անպետք ցեղ եք։
Ցեվ էլ շատ —շատ
Աներեսն եք,
Դրանից լավ,
Որ չտեսնեք։

ՀՀ Ազգային գրադարան
NL0933165

16 МАЙ 1936 192

11
28180

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

ХНКО АПЕР

Как мыши дрались с кошкой

Гиз ССРА, Эривань 1936

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան
Տեխ՝ խմբագիր՝ Ս. Գասպարյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

Գլավլիտի լիազոր 47, Պատվեր 727, Հրատարակչ. 3326 տիրաժ 5000
Պետհրատի տպարան — Երևան